




ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏՎԻ
ԹԻ 7.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՅՈՒՆԻՍ 31.
1872.

ԸՉԳՆՅԻՆ, ԲԱՆԱԾԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

Յ Ո Ր Դ Ո Ր Ա Կ Ա Ն Խ Օ Ս Ք

Ա Ռ Հ Ա Յ Կ Ա Ձ Ո Ւ Ն Մ Ա Ն Կ Ո Ւ Ն Ս (*)

«Ձեզ եմ ասում՝ Ձեզ Հայոց նորահաս երիտա-
սարդք։ Ձեր անունին մեռնիմ՝ Ձեր արեւին զուր,
սգան, տասը լեզու սովորեցեր, Ձեր լեզուն, Ձեր
հաւատը զախմ բռնեցեր ու Աքուն, Բեր Հայաստան»

ՆԵՐԿԱՅ դարուս մէջ այս մտաւոր
և հոգեւոր սթափութեան ժամանակ,
մինչդեռ մեր ազգի յառաջխաղացում
թեան և լուսաւորութեան մասին
խորհրդածութիւնը կը լինին բոլոր բա-
րեմիտ հայրենակցաց յոյսն ձեր վրայ է
Հայկազուն մանկունք, որ ծնիք, ծաղ-
կիք և մեր Ղզգին ու հայրենեաց այն
սրտունքն տար, որոյ դարաւոր ժամա-
նակներէ հետէ կը փափաքի մեծու-

կարօտիւ։ Դնէք աղբային վերանորո-
գութեան ասպարէզն սէտք է բռնէք։
Հայ բարի սրտերը ձեզ համար կը յը-
ղանան բարի խորհուրդներով, բոլոր
կանխատես հայեցումաճքներն ձեր բա-
րեբառակի ասպաղային վրայ են ուղղած
և թող իմ յորդորս կան մի բանի խօս-
քերն ձեր բարեյոյս անուան և անս-
րտառ ու շաղբութեան նուիրուին։

Իմացէք Հայկազուն մանկունք որ
վերին Մանաբարի Նախախնամու-
թիւնը բաւական համարեալով տառա-

(*) Տես Բերականութիւն Գ. Մ. Տէր Թէֆ. 1860.

պանոց, հալածանոց և գերութեանց այն քամած բաժաններն՝ զորս մեր նախորդներն արեան տրտատութենով և աղետար չհաւաքանքներով ծծած են, կը ծագի մեզ համար միլայնաճաւալ ըյս, կը լուսաւորէ մեր անցեալն ու ապագայն, կը ստիպէ խորագննին աչքերով խոյզ և խնդիր լինիլ մեր նախնեաց մանրամազ փոշիներու մէջ, հեկեկանօք և հայրակորոյս ու փառազուրկ որդւոց տրտատութեամբ շրջիլ նոցա ման եկած նուիրական տեղերուն մէջ, տեսնել նոցա փառաց տխուր յիշատակներն, որոնք նոցա գրաւոր մնացորդներն՝ առնուլ մեր ձեռքն համբուրել և մեր արտասուքներն նոցա փոշիներուն մէջ ցօղելով փափկացնել, շունչփել նոցա և ի նոցանէ շունչ ծծել և մի ազգային կենդանութի ստանալ:

Անցան և կ'անցին արքայանայ, սառնահոգութեան և անտարբերութեան դժուարատար օրերն, Հայկազուն մանկունք, մինչդեռ մեր խեղճ նախորդներն բռնութեանց և քաղաքական ազդակործան խորամանկութեանց մէջ տարուբերուելով՝ չքիւրողացան պաշտել և անմոռաց պահել մեր մայրենի լեզուն:

Անցան և կանցնին անմտադիր օրերն, մինչդեռ պանդխտութեան և տարութեան վարմերու մէջ փաթաթուած, օտար լեզուաց եւ սովորութեանց անձնատուր և անձնուէր եղած, չէինք կարողանար և չէինք ըզգար մշակել և ծաղիկեցնել մեր սեփականը: Այժմ հաս կը գտնին մեր ականջաց ԶԱՅՐԵՆԻՔ, ԱԶԳ, ԱԶԳԱՅԻՆ ԿՐՕՆ և ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒ խանդակաթ և զարթուցիչ բառերն, կը գրդեն ըզմեզ մտածել անցեալն ու ապագայն, բաղդատել հինն և նորը և մի գեղեցիկ առաքինութեամբ ազդաշնուութեան հանդէս բանալ:

Արդեամբ, որ մեր ազգային լեզուն մշակելով և մեր պանդխտացած և տարացած եղբայր համար առհասարակ մասն ու բաժին առնելով՝ կարող ենք մեր նախնեաց լուռ շիրմոց, անմահ յիշատակարանաց, արձանագրութեանց և արեան քրտինքով աշխատասիրած գրաւոր վաստակոց ձայնն ու զօրութիւնը հասնիլ և նովու մեր հառաչանքն, մեր որոնական ձայնի դռններն, մեր սրտի խորոց որդիական զեղմունքներն, մեր կենդանութեան աւետիքն և վերանորոգութեան եռանդն կարող ենք ազդել նոցա դարաւոր գերեզմանաց սրտին: Այն երանելի նախնեաց ոսկեղնիկ գրչաց թարգմանութիւնքն և մեր քրիստոնէութեան աղբիւր Ա. Գրոց երանական ընթերցուածքը ազգային լեզուաւ միայն կարող ենք ընթերցասիրել:

Այս մայրենի լեզուն, մայրենի բարբառն, նորահաս հայկազունք, այժմ բանախօսութեան առարկայ է դարձած և ճիգն կը թափէ իւր մոռացութեան դամբարաններէն խլտուիլ, խլղեր ի բաց ձգել իւր աղաւաղութեան կտորներն, ստրկութեան և գերութեան երիզներն և օտարականութեամբ ծածկուած փաթութանքներն և իւր որդւոց համար հասարակաց դառնալ: Արեւիկայ մէջ օրագիր և ամսագիր, լրագիր և այլ աշխատասիրութիւնք բոլորն կ'ազդադակեն և ձայն կը տան՝ գոնեայ այսուհետեւ Հայ մանկութեան բերանին թոթովանքը մայրենի լեզուաւ բանան և մատաղ սիրտն ազգային կրօնի ծաւալմամբ զարգացնեն: Չեր վրայ են ուրեմն, նորահաս Հայկազունք, ազգային վերանորոգութեան յոյսերն և պարծանքներն, անցածներն արդէն անցած են և ներկայիս մէջ գլուխուածներն միայն ի ժառանգութիւն Հայութեան հաղիւ կարող են կտակ

աւանդել է Հայրենեաց ճշմարիտ զաւակ լինելու համար այնպէս պատրաստեցէք զձեզ, որ Հայրենիքը, աղգայնութեան սուրբ անուէր ազգաց կարգին մէջ ձեզմով չամաշէ, ինչպէս քանի տարիներէ առաջ և այժմ իւր որդւոյ մէջ մոռցուած և անշքացած տեսնելով իրենց լեզուն, վարքն ու բարքը կ'ամաշէր և կ'ամաշէ: Դուք մի յուսահատիք թէ մի փառաւոր ազգէք կարող կազմել, նկատելով՝ որ հաւածանոց և գիտութեանց մրկայոյդ ծովին սղիքները զձեզ հեռաւոր աշխարհներ ցիր և ցան են արած: Այն յուսահատիք որ մեր հայրենակիցներէն ոմանք մեզմէ բաժնուած են, ոմանք իրենց ազգայնութեան յատկանիշներն մոռցած են և ոմանք տգիտութեան մէջ կը թարթախին:

Եթէ դուք աղօթէք և գունդործէք ձեր ազգային բրիտանիական աւարատ կրօնի և լեզուի հիմանց վրայ զարգանալ այս ամեն ազգային ձախորդութեանց շուտով դեղ ու դարման կը լինին: Ամենայն յուսահատութիւն ի բոց թողած՝ մոտմեցէք դուք միանգամայն, որ մենք ազգ ենք, ունենալով մի և նոյն ծագումն, մի և նոյն կրօնը, մի և նոյն լեզուն, մի և նոյն օրէնքներն, մի և նոյն վարքն ու բարքն, մի և նոյն փառքն ու թշուառութիւնքն, մի և նոյն յոյսերն, եթէ ոչ բոլանդալտպէս, գոնեա՛ մեծ մասամբ, որք բաւական են համակրութիւն զարթուցանել որ մեր մէջ միմեանց հետ միանալու, զմիմեանս սիրելու, միմեանց փառացն ցանկանալու և միմեանց համար մեր անձն զոհ մատուցանելու: Ատմեցէք, որ մենք ազգ ենք և մեր հայրենեաց մէջ մեր փառքն ունեցած ենք, այն է մեծանուն թագաւորներ, գիւցազուն նախարարներ, հայրենեաց նահատակներ և ճշմար

իտ զաւակներ, սրտամաքանական արժանախշատակ գործքեր, օգտակար օրինադրութիւններ, մեծահամբաւ քաղաքներ, քաջութեան, քաղաքակրթութեան, գիտութեանց և արուեստից մէջ անուանի և հռչակաւոր մարդիկներ, վերջ ամենայնի, բնութենէն պարգեւուած ազգային յատկանիշներ, գրծագիրներ և սրբիշ կատարելութիւններ, որոց յիշատակն միայն կարող է շարժել մեր սրտի խորութիւնը և աւրիական սգին՝ նորագելու մեր ազգայնութեան փառքը և կանգնելու մեր նախահարց սիրալի և միանգամայն տխրալի շիրմաց վրայ իբրեւ արձան անմոռաց երաստագիտութեան: Եւ այդ քաջ իմացէք, որ մեր մայրենի եկեղեցւոյ և լեզուի ձեռամբ և հայրենեաց անձկարեաց սիրով կարող են այս մոտմանքներն և ազգային փառաց վերանորոգութիւնը զարթնուլ և վերականգնիլ: Ասան զի եկեղեցւոյ մէջ միայն, իբրեւ Աստուծոյ տապանի մէջ, աշխարհաստան բռնութեանց և նենգութեանց ջրհեղեղն աղատուած՝ զոյգ զոյգ ամփոփուած մնացած են մեր կենդանութեան արմատներն—ազատաւիրութիւններն իսաղաղաւիրութեան, ձէսերն և արարողութիւնքն ընդ ջրմեռանդութեանց, ազգասիրութիւնն ընդ ներողամտութեան, հալածանոց և նահատակութեանց յիշատակներն ընդ տօնելութեան և անմահ մրցականաց, և ի սրտի ամենից տոտուածաւիրութիւնն ընդ մարդասիրութեան: Այն ազգին կտուրէն մին է նմանապէս լեզուն, նաեւ մեր մտաւոր ճոխութեան և բանականութեան արդասեաց գանձարանն: Այնքա մէջ մեր ազգի գրաւոր շինութեան և հանձարոյ մնացորդներն պահպանուած են և նովաւ միայն հասարակաց սեղանի վրայ մեր ազգային բնա

տուր իմացականութեան որսողներն
կարող ենք հանդէս բերել: Իսկ հայ-
րենասիրութեան համար այլ եւս ինչ
ասենք, որ իբրեւ մի աղնուտիան
հուր և սրանչելի սէր, իբրեւ կապ մի-
ազգի զգացմանց՝ պատշաճ է թէ՛ հա-
րըստին, թէ՛ ուսումնասիանին, թէ՛
արուեստաւորին, թէ՛ փաբրին և թէ՛
մեծին, թէ՛ թշուառութեան և թէ՛
բարեբաղդութեան ժամանակ: Հար-
կաւոր է կ'ասենք, թէ՛ ըսբանացւոյ
գեանափոր բնակարանին մէջ և թէ՛
թագաւորաց մարմարոնեայ և սկիա-
պատ սպարտանց մէջ, թէ՛ Սահարայի
ամայի անապատաց մէջ և թէ՛ Մար-
բատայ ամենածաղիկ դաշտաց մէջ:

Ուրեմն մեր որսերու մէջ մեր կը-
րօնի ծաւալումը, մեր լեզուի ազգո-
վին դործածութիւնը և դիւրին եղա-
նակաւ ծաւալումն և մեր բոլոր հայ-
րենագործի և տարագիր եղած ազգակ-
ցաց մէջ հայրենասիրական զգացմանց
զարթուցումն մեր ազգային շինու-
թեան տաճարի հաստատունն սիւնքն
են:

Քաղցր էր մեզ, նորահաս հայկա-
ղունք, ազգաշինութեան այս երեք
ամենասիրելի սիրտանց և կոտորա-
ծի վրայ ընդարձակօրէն խօսիլ: Քաղ-
ցր էր մեզ առանց հեռաւոր հայե-
ցումաց՝ նոյն խոյն մեր նախահարց
կեանքով ցոյց տալ թէ մեր ազգի մէջ
ազատ կրօնասիրութեան և ճշմարիտ
հայրենասիրութեան ձեռքով՝ սրճափ
սրանչելքներ գործուած են թէ՛ պա-
տերազմի և թէ՛ խաղաղութեան ժա-
մանակ: Քաղցր էր մեզ երկարօրէն
դատմել թէ մեր առաքելական մայր
Եկեղեցին ազգի ազատութեան և յա-
րատեւութեան համար ինչպիսի ա-
ռաքելանման հայրապետներ, հոյա-
կապ թագաւորներ, գիւյաղուն նա-
խարարներ, առաքինի նահատակներ

և մարտիրոսներ յառաջ բերած է, երբ
հայրենասիրութեան երկրաւոր մա-
սունքներն իւր բրկատունեակն կրօնի
երկնաշունչ վարդապետութիւններով
դաւած և մաքրած է և նորա վրայ իւր
բարերար թեւերն տարածած: Քաղ-
ցր էր մեզ արդէն խոյն մատաղ
սրտի մէջ աղդել և տպաւորել թէ
մեր ազատաշունչ կրօնի հոգեւորար-
ջերմեռանդութեան և հայրենասիրու-
թեան ծաւալումը ինչ բարիքներ ինչ
հրաշքներ կարող են յառաջ դալ և
ինչ երանութեաւ ապագայ կարող է
սրտորոտաւելլ. բայց այս ամենը այ-
լում՝ բարեպատեհ տեղւոյ և ժամա-
նակի թողով՝ բաւական կը համարվի
և առ այժմ ասել թէ այս եւս մեր
կրօնի և հայրենասիրութեան ձեռքով
եղած մի ամենամեծ և կենդանի ըս-
քանչեք մ'է, որ այսքան դարերէն
յետոյ, հաղարաւոր ազգաց անկմա-
նէն և անցայտութենէն յետոյ, մենք՝
հալածանաց, արհաւրանաց և փոթո-
րիկներու մէջէն անցնելով՝ ազգի ա-
նուն կրելով՝ կենդանի ենք տակաւին,
և այս տեղ կը մտնաւորենք մեր խօս-
քը միայն մեր ազգային լեզուի վրայ:

Սեր ազգային լեզուն, որ մեր ազ-
գայնութեան յատկանիշներէն և միւլ-
թեան կապերէն մին է և մեր ժամա-
նակի մէջ բանախօսութեան առարկայ
դարձած է, երկու գլխաւոր ճիւղի
կը բաժնուի — Վրարար, որոյ մէջ
մտացած է մեր նախնեաց գրուածքնե-
րն և ճաշխարհիկ վաստակներն, մեր
պատմական և կրօնական կենաց նկա-
րագիրն — և աշխարհաբար, որ հար-
իւրաւոր դաւառական փոփոխութիւն-
ներ և այլատարազ ձեւեր ընդունե-
լով՝ շատ տեղ անհասկանալի նոյն խոյն
հայախօսաց համար՝ համարեւ մի օ-
տարական նոր բարբառ կը ձեւացնէ:
Առաջինն ունի իւր նրբութիւններն,

իւր ճարտարապետական ձեւերն, իւր ողորկումը և կոկորումը ելեւէջներն, իւր քաղցրալուր հնչմունքներն, իւր աղ-դու և համոզիկը դարձումներն, իւր կանոնաւոր և սահմանեալ օրէնք-ներն, միայլ բանիւ այն ամեն յատկու-թիւնքն, որք կատարելութեան հա-տած լեզուի մը սեփական են, բայց ցաւալի է յայտ, որ հասարակաց ոչ հասկանալի է Արիւորդն ունի իւր ոյ-լատարալութիւնն, իւր օտարախորթ ծոխութիւնն, իւր անձեւակերպ հրեւ մունքներն, անդ տեղ իւր աղանդա-կութիւնն, բայց հասկանալի իւրա-քանչիւր տեղական դաւառին :

Այսպէս ահա ինչպէս մեր մայրե-նի լեզուն, նոյնպէս և մեր ազգի բա-նասիրաց կարծիքները երկուքի են բաժ-նուած և խմորման մէջ են : Մեր աղ-գային լուսաւորութեան մասին լեզուի կարեւորութիւնն իմանալով՝ ոմանք գրաբարն արծարծել կը ցանկան և նո-րա վրայ առաջ դնալ և ոմանք աշխար-հաբարն միայն ՚ի գործ դնել կը սըն-դեն, բայց անաշու և անկողմնակի դասելով՝ երկուքն եւս հարկաւոր են ինչպէս մինչեւ ցայսօր հարկաւոր ե-ղած են : Արաբարն հարկաւոր է մեր մատենագրական ծոխութիւնքն հաւ-կանալու, մեր անցած ու գնացած կե-նաց նկարագիրներն և ազգային բարե-լաւութեան համար ընտրած ծանա-սարհներն վերադննելու, ՚ի վեր քան զամենայն մեր եկեղեցական աստուա-ծաշունչ ընթերցումներն, հոգե-բուլիս ազօթքներն, քարոզներն, ճա-ռերն, երգերն և շարականներն հաս-կանալու, իսկ աշխարհիկ բարբառն հարկաւոր է այժմ մեր մտքերն մի-մեանց դիւրաւ հաղորդելու, մեր ըն-տանեկան խօսակցութիւնքն հայացնե-լու և մեր այլ և այլ բանաւոր պիտոյ-քն հոգալու : Այլուքն եւս շատ

հարկաւոր են մեզ և առ հասարակ մեր բոլոր բարեխաճ բանասիր հայրենակ-ցաց փոխմն և եռանդն այն է, որ աշ-խարհիկ բարբառով դրուածքներ յա-ռաջացնելով՝ ընտիր բառեր և դար-ձումներ մուտցու թեան մթութե-նէն ՚ի լոյս բերեն և գրաբարն ծոխ-ցրեն : Արաբար լեզուի գրուածքնե-րն արծարծելով աշխարհաբարի խառ-նիխառն և օտարահնչիւն բառերն վեր-ջացնեն, և գրաբար լեզուի գեղեցիկ և ընտիր բառերովն նորա մի գրակա-նական ուղղութիւն տան և Հայ հա-տարակութեան ընդհանուր լեզու չե-նեն և ոչ թէ օտարախոսն այլանդա-կութեան մէջ թողուն, որ մի դաւա-ռի լեզուաւ գրուածն՝ միւսն չհասկը-նայ և Հայր իւր հայ արեւնակցի հեռ-խօսելու ժամանակ թարգմանչի կարօ-տի : Այլուի վերանորոգութեան մա-սին այս ընթացքն ու ուղղութիւնը մեր ազգի մէջ բաւական ժամանակ է շարունակուած և կը շարունակուի, մինչեւ որ կորիճ երիտասարդաց զը-րիշներով դաւառականաշխարհիկ բար-բառներն և գրաբարն ժամանակիստը-ձական բալլի մէջ հաւաքուին, միա-նան, ձուլուին և այն տիպի ու սրտ-կերն ստանան՝ որոյ ազգի սթափու-թեան հոգին կը փափայրի և կարօտի-կորոնէ :

Հայկազուն մանկունք, ահա այս-ովիս գործունէութեան աստարեղծեր առջեւ բացուած կոյ, նախախնամու-թիւնը և ազգը կը դաբաւաւորեն այ-ժմ զձեզ, որ եռանդուն սիրով, հայ-րենասէր յօժարութեամբ, անխոր-դախ պատկառանք մեր նախնեաց մա-տենագրութիւնքը ընթերցասիրէք, հասկնաք նոցա արտաքին յօրինուա-ծը և ներքին հոգին, նոցա ոլորուն և ազգու դարձումներն, նոցա կա-խարդիչ սակաւախօս և մեծխմտտ եւ

լեւելջ երևն, նաև նոցա խրթին և դը-
ժուարիւնոց մոքերն : Ճամանակը և
ազգի բարբառաւորիկ ապագայի յոյսը
զձեզ կը պարտաւորէ, որ առանց ան-
հոշութեան, առանց սառնութեան
և ծաղրածութեան հետամուտ լինիք
գաւառական բարբառներու և խորա-
մուխ լինիք նոցա փոփոխութեանց և
օտարաձեւութեանց, ուր կը տեսնէք
մեր խեղճ ազգի կեննաց բոլոր պատկե-
րն և քաջածններն — գերութիւն, բըւ-
նութիւն, օտարութիւն, պանդրիս-
տութիւն, հալածանք, փոփոխութիւն
փարուց, բարուց, սոփութեանց և
խօսակցութեանց, բայց միանգամայն
կը տեսնէք օտարականութեան ճան-
կերէն ազատուած և մաքուր մնացած
ընտիր բառեր և վայելելի ձեւեր, որք
մեր լեզուի ներկայ կազմութեանը շատ
գեղեցիկութիւն պէտք է տան :

Սակայն իմացէք որ գրաբարն ձեզ
պէտք է անսայթաք առաջնորդ լինի ա-
խորժակով աշխարհօրէաւին մէջ բարին
և կատարեալն ընտրել : Մինչև ձեր հ-
գին չընտելանայ, մինչև ձեր ականջնե-
րուն մէջ չը քաղցրանայ գրաբարի մի-
մահնչիւն և քաղցրալուր ձայնը, չէք
կարող աշխարհիկ բարբառներու դար-
ձուածոց և բառերու մէջ ընտրու-
թիւն առնել : Առանց գրաբար լե-
զուի սոսկումն եւ սարսափ կը գայ
ձեր վրայ, և չէք կարող ձեր սեփհա-
կանը ճանաչել տեսնելով թէ մեր ազ-
գի նման մէկ փորթութիւ ազգ (որոյ
մի մասն եւս մոռցած են իրենց լեզուն)
ամեն տեղ քանի՞ քանի՞ բարբառներ
ձեւացուցած է, ամեն երկրի մէջ ու-
տար բառեր և խօսուածքներ ընդու-
նելով :

Իսկ գրաբար լեզու ասելով չը-
կարծէք թէ մի դժուարամատչելի
լեառն և մի կախարդական կամուրջ է,
որ մարդոյ համար անմերձենալի և ա-


նանցանելի լինի, ոչ, մատաղ մանկունք,
չառ դիւրին է հասկանալու՝ ոչ թէ
միայն մեր ազգայնոց համար, այլ նա-
եւ հայերէնասէր օտարազգիներու,
մանաւանդ այս ժամանակիս մէջ, երբ
գոտական եղանակներն կը դիւրանան,
ուսանողութիւնն բուռականութեամբ
և մտաց դորձունէութեամբ դպալի կը
լինի քան թէ խորազանաւ և հարու-
մաշ սերտողութիւններով : Այս միայն
նոցա համար, անհասկանալի և դժ-
ուարիմոյ է որք անընթերցասէր,
անհայերէնասէր, օտարասէր են եւ
չունին փոփաք և ազգային եռանդ-
կարգալու հալածանքէն, սրէն ու կրա-
կէն ազատուած և իբրեւ թանկագին
աւանդ և պանդխտութեան քաղցր
բեռն յերկրէ յերկիր տարուած՝ իրենց
գրականութեան մնացորդներն և դա-
րէ ցգար ժամանակի ձեռքէն արտագ-
րութեամբ խլուած քրիստոնէական
զգանցմանց և պատմական հմտու-
թեանց յիշատակարաններն : Պառնու-
թիւնն, արհամարհանքն և անաշխա-
տասիւթութիւնը ամենաընտիր և ամե-
նագեղ՝ ցիկ բանն անդամ մարդոյ հա-
մար գլուխը և անտանելի կարող են
առնել : Իսկ հայերէնակից մանկունք,
սառնութեան և անջանասիրութեան
ժամանակ չէ, այլ երկարատիկ աշխա-
տասիրութեան, երկարատիկ անջորջու-
թեան և մարտման :

Յստաջ գնացած ազգայնոցելով
և մենք յառաջ գնալու քիրան պէտք է
թափենք, բայց միանգամայն պէտք է
մեր անցեալի վրայ մի կարեկից հայե-
ցուածք ձգելով՝ որոնենք ինչ որ կոր-
սընցուցած ենք : Ազգաշինութեան
ձեռն պէտք է միտնէք, բայց նիւթերն
հնութեան աւերակներէն և մնացորդ-
ներէն պէտք է ժողովէք : Պատերազ-
մաց և մաքառմանց պէտք է դիմադրենք,
բայց ոչ դէմ յանդիման յայտնի դըւ-

հաւորութեամբ թշնամեաց դէմ, այլ
դադարնի սուրերու, ծածուկ հրձգու-
թեանց և գողութեան վիրաց, որոց հա-
մար հմուտութիւն եւ զգուշութիւն
հարկաւոր է: Պէտք է խմանաք, որ մեր
Վրաց դարաւոր ժամանակներէ հետե
պատերազմներ ունեցած է, ոչ թէ եր-
կիրներ նուաճելու, ոչ թէ Վրացեր կոր-
ծանելու, ոչ թէ տէրութիւններ կա-
նելու համար, ոչ, այլ իւր բրիտանիա-
կան մայրենի Վիկտորիոյ և Վրացիա-
թիւնն անկախ սրահպանելու համար,
այս յարատեւ պատերազմը ունեցած
է՝ ոչ թէ միայն մի ազգի, մի տէրու-
թեան կամ թագաւորի հետ, ոչ, այլ
աշխարհքիս բոլոր ազգաց և տէրու-
թեանց հետ, ուր որ ինքն իւր պան-
դիստութեամբ գտնուած է: Նոյն օրի-
նակ սրատերազմներ և մրցումներ նա
և մեր առջեւ կան, որոց միայն Վիկ-
տորիոյ ազատական սիրով, մեր առա-
քինի հայրենասիրութեամբ և ազգա-
յին լեզուի մշտնութեամբ կարող ենք
ընդգիմանալ և յաղթել յաղթութեան
պսակը ընդունելով մեր ազգի յարա-
տեւ կենդանութիւնը և բարոյական
յառաջադիմութիւնը: Այլ չկարծէք
թէ մեր Վրացի համար հալածանքներն,
պատերազմներն և գերութիւնքն մի
թշուառ ճակատագիր և ապաքաղդու-
թեան նշան են, ոչ բնաւ, հալածանքն և
նեղութիւնքն մեզ համար այն երկնային
ամպերն են, որոց մեջն մեր ազգը
փաթորիկներէն և մորիկներէն մղուե-
լով անձրեւի վճիռ կաթիլներու նման
մաղուած ու պարզուած է մինչեւ մեր
ժամանակներն իւր ազգային եռութիւ-
նը անկախ սրահպանելով: Ս'եր նախ-
նիքներն հալածանաց ժամանակ շատ
բան չինած և առաւել անմահ մեծա-
գործութիւններ են արած քան թէ
մենք մեր խաղաղութեան ժամանակ
Հալածանքը գտնոյն արթուն պահպա-

նած է, բայց գուցէ հանդատութիւնը
մեր աշխարհութիւնը թմբեցնելով՝ մեր
գրուխն անհագութեան բարձի վրայ
դրած են: Հետախուզեցէք միանգամ
մեր նախնեաց գրաւոր վաստակներն,
կրօնասիրական եւ հարկնասիրական
հոգին, և մեր ժամանակաց անտար-
բերութիւնքը և օտարականութեամբ
վարակուելն և կրակներ ասածներու
ապացոյցներն: Ահա տեղէք և ի միտ
առէք նոցա քրտնաջան աշխատու-
թիւնքը և հեղահամբոյր հոգին, որք ա-
ռանց տպագրական հեշտութեան, ա-
ռանց գրելու նիւթոց առատութեան
հաղուագիւտ մագաղաթներն իրենց
թղթի գործարան չինելով, իրենց գը-
րիչներն տպագրական մամուլ ու ի-
րենց խուցերն տպարաններ, և աւք
կեանք զոհելով, անբաւ թարգմանու-
թիւնք, մեկնութիւնք, պատմաբանա-
կան յիշատակարանք և այլ բիւրաւոր
վաստակք յրգուց որդի աւանդած
են, որք որչափ հրոյ և սրոյ, աւերա-
ծոց և գերութեան ճարտի դարցած
են այնու ամենայնիւ այնչափ մեզ
հասած են, մեզ՝ որ այս ամեն բանի
դիւրութեան դարու մէջ մեր աշխա-
տասիրածներէն բիւրաւոր անդամ ա-
ւելի են: Բայց մենք նոցա սիրագոր-
ծութեանց առաջ պէտք չէ ապերախոտ
գտնուինք, պէտք է զգանք, որ այն ազգի
մեծ բարերարքն որոց անուանք պատ-
մութեան մէջ կը կարդանք և որոց ա-
րարքն զմեզ կը զարմացնէ, նոքա բու-
լորն ալ մեզ համար աշխատած են,
մենք նոցա ժառանգութեան մէջ մը
աւած ենք և ոտք կոխած ենք այն ճա-
նապարհի վրայ, որ նոցա ընթացքով
նուիրական է: Անշուշտ պէտք է ի-
մանանք, որ ուր նոքա կանգ առած
են, մենք պէտք է սկսինք, ուր նոքա
հիմ ձգած են, մենք պէտք է բարձրա-
ցունենք եւ մեր յետագայիցն աւան-

դէնք ՚ի կատար հասուցանելու ազ-
գայնութեան այն հրաշալի տաճարը՝
որոյ տնկեան քարերուն վրայ մեր նա-
խահարք արիւն և բրտինք թափած են
Սանեհր ուրեմն այսպէսնոց ս ժառան-
գութեան մէջ Հայկազուն մանկունք,
յորդուց յորդի ազգի յորստեւու-
թեան և պայծառազարդութեան կը
տակը աւանդենք և այնուհետեւ մեր
Նոյն կամ Նիկեղեցին իբրեւ հինօրեայ
արձան, իբրեւ ամենակերպ անցքե-
րով քանդակուած կոթող, իբրեւ քը-
րխտոնեական կենաց սրտակեր՝ համար-
ձակ կարող է բարձրացնել իւր աշ-
խարհատես գլուխն և աներկիւզ ա-
զազակել. « Յորդահոսան հեղեղներ,
բազմածուփ ալիքներ, հալածանաց
շանթեր, խորամանկութեանց գաղտ-
նի մուրձեր, յուզեցէք, բորբոքեցէք,
թափեցէք ձեր զօրութիւնը, ձեր կա-
տաղութիւնը ու կործանմունքը, ես իմ
ազատ կրօնքով և նահատակացս ար-
եամբ կենդանի եմ և յաւերժ անսա-
սան տիեզերաց աւերակաց միջ »:



ԲԱՆՍԱՍԻՐԱԿԱՆ ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԶԱՐԵՀ, ՀԱՀԱՊ, ԿՈՐԻՒՆ

(Հարունակութիւն և վերջ տես թիւ 81)

Կորիւն.— Ստիկընք ուրեմն, մարդ,
եթէ իւր աշխատութիւնը արդարու-
թեան վրայ հիմնէ, և խոհեմութեամբ
ու հաստատուն յարատեւութեամբ
աշխատի, չեմ կարծեր որ անպտուղ
և անվարձ մնայ, ամեն աստիճանի և
վիճակի մարդ, սւսանող աշակերտէն
և ստորին գործաւորէն միտեալ մինչև

ամենամեծ կարողութեան տէր վաճա-
ռականը, արհեստաւորը և խմատուն
գրագէտը, վերջապէս մարդ մը երբ
իրեն ըստանձնած պարտուց մէջ ար-
դարութեան ճանրէն կը շեղի, վախճա-
նը անպատուութիւն, կործանումն և
կորուստ է, ամեն տեսակ անյաջողու-
թիւն և արդելք իրեն ամեն քայտիտ
խին մէջ պատրաստ է՝ յս ըսելով հաս-
տատել չեմ ուղիւ թէ արդարու-
թեամբ աշխատողներուն ձախորդու-
թիւն չի պատահիր, քան լիցի. բնա-
կան և անխուսելի դիպուածներ կան
որոց ենթակայ է ամեն ոք, բայց հա-
ւատարիմ առաքինի անձը՝ մոլութենէ
պատահած բազմադիմի վարձանքնե-
րէն ազատ ըլլալէ զատ, իւր արդարու-
թիւնը, պարկեշտութիւնը և հաւա-
տարմութիւնը ղենքը փրկող կարեկից
ու բարեսէր սրտեր կը գտնէ. իսկ մե-
լինքը քանի մի անգամ զայս խա-
բէլէն վերջը անօգնական կը մնան, և
կրաւամբ, արդարութիւն է որ այնպի-
սիներն ընկերութենէ մերժուելով ան-
խնամ մնան առ ժամանակ մի մինչև
ուղղութիւն, վասն զի իրենց սիրտն այն-
չափ աւրուած ու չարացած կ'ըլլայ,
որ ուրիշին բարեսէր ձեռնտուութիւ-
նըն ալ չարաչար կը գործածեն, որով
արդարութեան պատուհասը կը կրեն
միշտ, ուրեմն ըսեւ ասորեւուն ճամբան
արդարութիւնն ու առաքինութիւն է:

Զարեհ.— Մե, այդ բոլոր ըսածնե-
րդ ճշմարտութիւններ են, բայց մեր
խօսակցութեան հետ ի՞նչ վերաբե-
րութիւն ունին:

Կորիւն.— Հատ մերձ վերաբերու-
թիւն ունին. նախ ընդունեցէք ըսած-
ներս . . . :

Հակադ.— Իմ ինչքա չի հասնիր, հի-
մա աշխարհի մէջ ոչ ճշմարտութեամբ
և ոչ արդարութեամբ, այլ խաբես
խաբեսով է որ գործ կը տեսնուի: